ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 25 » ՀՈՒՆԻՍԻ 2020 թվական, N 52-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ՔԱՂԱՔ ԱԼԱՎԵՐԴԻ, ՍԱՆԱՀԻՆ ՍԱՐԱՀԱՐԹ ԹԱՂԱՄԱՍ, N 1/25-2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Թույլատրել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 1/25-2/1 հասցեում գտնվող, բնակելի կառուցապատման նշանակության 0.004 հա մակերեսով հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարել:
2. Հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն աղյուսակի:
3. Սահմանել՝ աճուրդի մասնակցության վճար 15000 դրամ և քայլի չափ՝ մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Արտուշ | Աբելյան | [signature] | | |
| 2. | Արթուր | Դավթյան | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | Արմեն | Կարապետյան | | | |
| 4. | Սեյրան | Հովհաննիսյան | | | |
| 5. | Ալիկ | Նասիբյան | | | |
| 6. | Դավիթ | Նոնինյան | | | |
| 7. | Սվետլանա | Պետրոսյան | | | |
| 8. | Վալերի | Վարոսյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020թ. ՀՈՒՆԻՍԻ 25-Ի N 52-Ն ՈՐՈՇՈՒՄՈՎ

# Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ

## ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկա-գիրը | Մակե-րեսը /հա/ | Նպատակային նշանակությունը | Հո-ղա-տեսք | Գործառ-նական նշանակու-թյունը | Մեկնար-կային գինը | Սահմա-նափա-կումները |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ավտոտնակ կառուցելու | Համայնք Ալավերդի, ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 1/25-2/1 | 06-002-0150-0371 | 0.004 | բնակավայրերի | - | Բնակելի կառուցա-պատման | 120 000 դրամ | չկա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ